ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արատտա 1 ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի կարիքների համար պետք է տրամադրվեն փողոցներում տեղադրելու համար 144 /հարյուր քառասունչորս/ հատ փոքր աղբաման: Աղբամանները պետք է լինեն համաձայն կից ներկայացվող լուսանկարի: Աղբամանների գույները և այլ մանրամասներ համաձայնեցնել գնորդի հետ: Աղբամանները պետք է լինեն չօգտագործված: Օգտագործած բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին: Աղբամանները պետք է տեղափոխվեն և տեղադրվեն Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից առաջարկվող տարածքում: Աղբամանը պետք է լինի հորիզոնական առանցքի շուրջ պտտվող և պատրաստված լինի մետաղական հիմքի վրա հետևյալ չափերով. Աղբարկղի հիմքի /ամրացման անցքերով/ չափը 200x200 մմ, վերևի բացվածքի չափը 260x260 մմ, բարձրությունը 400մմ: Ծածկը պետք է լինի կորաձև, բարձրությունը հատակից 760մմ /գնորդի պահանջով ծածկի թեքությունը ենթակա է փոփոխման/: Աղբարկղը պետք է պատրաստվի 2մմ հաստությամբ մետաղական թիթեղից: Աղբարկղ հենքը պետք է պատրաստվի 40x20x2 մմ չափի քառանկյուն խողովակով: Աղբամանին պետք է լինեն անցքեր գետնին ամրացնելու համար: Աղբամանները պետք է ամրացվեն խարսխով, մետաղական դետալներով /շտիր/: Աղբամանը ամբողջությամբ մետաղական է և մետաղական դետալները ամրացված են եռակցման միջոցով, բոլոր միացման կետերն ու եռակցված հատվածները պետք լինեն հղկված և լավորակ մշակված: Աղբամանը ներկել գրունտով, այնուհետև վերջնական լավորակ ներկով: Աղբամանները պետք է ունենան առնվազն 1 տարվա երաշխիքային ժամկետ

	Աղբամանը պետք է լինի եզակի տարբերանշանով «Շենգավիթ» կամ «Շ» դաջվածքով, համաձայնեցված վարչական շրջանի ղեկավարի հետ և այն չպետք է կրկնվի։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Аратта 1 в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	